Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Տ-26



# ՆՈՐ ՏՈՒՆ

ՅԵ. ՏԱՐԱԽՈՎՍԿԱՅԱ

ՓՈԽ. ԴԱՅԱԶԱՏ

1931 ՅԵՐԵՎԱՆ

891.715
Տ-26

891.71 Ս.
5
13 SEP 2013
5276
2011-05



Սպիտակ թերթն կպցրած
գծագրական տախտակին,
ճարտարապետն իր ձեռքին
ունի քանոն ու կարկին։
Նա գծում է և չափում –
այ, լուսամուտ ու դռներ,
իսկ աջ կողմից՝ անկյունում
ընթերցարան ու ակումբ.
տես այստեղից մինչ այնտեղ
միջանցք, միջանցք ու միջանցք։

9043
1027
32529



Իսկ անցքից այս մեծ լիֆտը
վերին հարկը կթռչի։
Այստեղ հատակ խոհանոց.
այնտեղ մաքուր մանկական
շարքով սիրուն սենյակներ,
նախագիծն իմ ճիշտ է. պարզ։
Եվ մեր այս նոր տան դիմաց
հրապարակ ու այգի
նախագիծն իմ ճիշտ է. պարզ



այստեղ պետք է կառուցել
բանվորական նոր տներ։

Իրար կանչող վերից-վար
Թռչունների ու մարդկանց··
անտառները յերգում են
և փայտ տալիս տներին։
Հատակ ոգում ճախրելով
ծիծեռնակն է ծլվլում,



իսկ բանվորը բետոնով
յերկաթ պատն է կառուցում։

Բարհատների ձեռքերին
բահեր, քլունգ, լոմեր կան.
սղոցում են հյուսները,
տաշում են շատ տախտակներ,
շինում են՝ դուռ, լուսամուտ
փայտով, մեխով ու խեժով։





Գարնանային հով շնչով.
անտառների զովությամբ
բույր են տածում ամեն կողմ
այս փայտերը դաների.

Ջահել տղա մի փոքրիկ
աշխատողն իր թանգարժեք
կտրեց հատակ ապակին.
Մեծ ապակուց թափանցիկ

Հոսեց առատ լույս աղբյուր,
լույսը թափվեց անափառ
ընթերցարան ու ակումբ:

Ներկարարը փայտի վրա
ամուր բռնած ներկ. վրձին
որորվում է ճիշտ այնպես
ինչպես նավը, վարարած
գարնանային հորդ գետում:



Ուրախ որոր աջ ու ձախ,
Հետո յետև ու առաջ
Ահա ներկը փոսկեգույն
Բետոն պատին է քսվում.
Նոր պատերով իր կարծր—
բարձրանում է միշտ վերև
Հսկա տունը—կառուցվող.
Իսկ վերևում մեծ մուրճով
Թիթեղագործ վարպետը
Կառուցում է տանիքը



Յեվ կարծում եք ահա սա–
վոչ թե տուն ե կառուցված,
այլ ովկյանում լողացող
հսկայական շոգենավ։

Միջանցքներում լայն, յերկար
մանտյորներ են աշխատում.
տարածվել են վեր և վար
ելեկտրական թելերը։
Հեռախոսը խոսում ե.



Իսկ լույսերը վառվում են։
Յեվ դռներին այս ամուր
պատրաստում են բանալի.
յոթը հարյուր դռան մոտ
աշխատում են հիսուն մարդ։




Ֆիզկուլտուրի դահլիճում
մեկը կախեց օղակներ.—
հարկավոր է մարզվել
տրապեցներով օրօրվող։

Երկաթ ցանցով մի արկղ
միշտ թռչում է վեր ու վար,



Իսկ բանվորը ժպտում է
իմ սիրելի ընկերներ,
պատրաստեցի ձեզ համար,
որ դուք լիֆտով բարձրանաք։

Մարդիկ անթիվ, անհամար
ավարտեցին մեծ գործը,
աշխատանքով աննկուն
հեռու գետից ջուր են բերել
բանվորական տան համար։



Յեթե կուզեք սառը ջուր
պտտցրեք ծորակը։
Հետո նորից այս մեկը -
Ձեզ պատրաստ է և տաքը։

Աշնան քամին փչում է,
Ինժեները փաղում է, —
բարձրանում է տները,
Հիացմունքով դիտում է.



Քամին դրոշն է ծածանում.
— Նախագծով ճիշտ է իմ,
տունը բարձր և ամուր,
կառուցված է հմտորեն։
Այսպես պետք է կառուցել
բանվորական նոր տներ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0392428

5276.

ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.

ՎԻՍՏՈՅԱՆԴՍԻ·Ե ·ԻՂ

ՊԵՏՀՐԱՏ N 1942 ԳՐԱՎԼԻՏ N 6590 (Ս) ՏԻՐԱԺ 4000
ՎՐՍ. ՊԵՏՀՐԱՏԻ ՊԱՏՎԵՐ N 6168